



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՀԱՅ ՅԵՂՈՓ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատավարձ»-ի № 13.

Վ. ՈՒ.

Ի՞նչ ՊԻՍԻ

ԿԱՐԳԵՐ ԵՆ ՀԱՐԿԱԻՈՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Ռուս. քարզմ. ԿԱՐՄԻՆ.

Թիֆլիս

Տպարան «Աշխատավարձ»

1918



27-277

ԱԳԸ  
27

ՄԳԻ

## Ի՞ՆՁՊԻՍԻ ԿԱՐԳԵՐ ԵՆ ՀԱՐԿԱԻՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Մեր ժողովուրդն ամեն մի հարըստահարութեան համբերեց, տնքաց ամենածանր հարկերի և տուրքերի տակ, հողի սակաւութիւնից, վատ կարգերից և գործարանային ծանր աշխատանքից: Այժմ մենք ուզում ենք մեր կեանքը տնօրինել նոր ձևով, որպէսզի գիւղացին աւելի հող ունենայ, որպէսզի նա չստիպուի իր վերջին կոպէկը տալու կապալի և տուրքերի համար, որպէսզի աշխատաւորները քիչ ժամեր աշխատեն և աւելի ստանան: Ուրիշ պետութիւններում էլ, Ֆրանսիայում, Անգլիայում և այլ երկիրներում մի ժամանակ ժողովուրդն ապրում էր մեզնից աւելի վատ, իսկ այժմ նրանք աւելի լաւ վիճակի են չասել, ի հարկէ, ամենից առաջ փշրե-

լով իրենց ստրկութեան շղթաները,  
որոնց մէջ պահոււմ էին նրանց չի-  
նովնիկները:

Այնտեղ ամենից առաջ ժողովուրդը  
ձեռք բերեց ազատութիւն և միահա-  
ւասար իրաւունքներ բոլորի համար,  
սկսեց ինքը կառավարել պետութեան  
բոլոր գործերն իր ընտրած մարդկան-  
ցով, և այն ժամանակ նա սկսեց մար-  
դավայել ապրել. նրա համար հեշտա-  
ցաւ իր դրութիւնը բարելաւելու գոր-  
ծը:

Շատ լուս. սրն է այդ ազատութիւ-  
նը և որոնք են այն իրաւունքները,  
որոնց հեռեանքով մարդիկ դառնում  
են ազատ քաղաքացիներ և ոչ թէ  
ստրուկներ:

Ահա թէ որոնք են այդ իրաւունք-  
ներն ու ազատութիւնները. —

Անձնական ազատութիւն,

Խղճի »

Խօսքի »

Մամուլի »

Ազատութիւնը՝ միութիւնների, ժո-

դովների, գործադուլների, բոլորի հա-  
մար հաւասար հրապարակային դա-  
տարան:

Պետական կառավարութիւնը՝ ամ-  
բողջ ժողովրդից ընտրւած մարդկան-  
ցով:

Այս բոլորն էլ ծանօթ խօսքեր են,  
որոնք վերջերս լրագրում յաճախ են  
երևում: Միայն թէ ոչ բոլորին է լու-  
յայտնի՝ թէ այդ խօսքերն ինչ են  
հշանակում: Մի տեսնենք թէ ինչ են  
դրանք հշանակում:

Անձնական ազատութիւն:—Ահա թէ  
ինչ է հշանակում սա—ամեն մարդ  
կարող է անել այն բոլորը, ինչ որ ի-  
րեն յարմար է՝ միայն թէ դա չը վը-  
հասէ ուրիշին. իւրաքանչիւրը կարող  
է ապրել այնտեղ և այնպէս, որտեղ  
և ինչպէս իրեն ցանկալի է, և գնալ  
ուր ուզում է, առանց որևէ անցա-  
գրի. ոչ ոք, ոչ մի իշխանութիւն  
չի կարող վերցնել մարդկանց ազա-  
տութիւնը, այսինքն բռնել հրան,  
բանտ հստեցնել և այլն: Այդ միմիայն

դատարանը կարող է անել, եթէ մարդ  
մի որ և է յանցանք է գործել. ոչ ոք,  
ոչ մի ոստիկանութիւն չի կարող մըտ-  
նել որ և է մէկի տունը և խուզար-  
կութիւն կատարել, եթէ դրա համար  
չկայ դատական իշխանութեան կար-  
գադրութիւնը: Իսկ եթէ հարկ կը լի-  
նի որևէ մէկին բռնելու՝ այն ժա-  
մանակ ձեռնհաս իշխանութիւնը պար-  
տաւոր է ոչ աւելի, քան 24 ժամ-  
այ ընթացքում և երբէք ոչ ուշ, քան  
երեք օրում քննութիւն կատարել, թէ  
ի՞նչ կասկածանքի հիման վրայ է բռ-  
նւած մարդը ու եթէ հաստատուեց, որ  
կասկածը հիմնաւոր է, ուրեմն պէտք  
է բացատրել նրան, իսկ եթէ ոչ՝ բռ-  
նւած մեղադրեալին լիակատար փաս-  
տական վկայութեամբ հէնց այդ ժա-  
մին արձակել: Իսկ մեղանում ի՞նչ-  
պէս էր:

Մեղանում ոչ ոք ինքն իրա հեա  
ադատօրէն վարւել չէր կարող՝ կարծես  
թէ նա երեխայ էր, կամ թէ յանցա-  
ւորի մէկը: Կարծես թէ իւրաքանչիւրը



վանդակում էր հատած, և այդ վան-  
դակի բանալին գտնւում էր ոստիկա-  
նութեան և զանազան իշխանութիւննե-  
րի ձեռքում: Գիւղացուն հարկաւոր է  
գնալ աշխատանք որոնելու—ստարշի-  
նան անցազիր չի տալիս, առանց ան-  
ցազրի էլ գնալ՝ ոչ մի տեղ ապրել չի  
թոյլատրւում: Եթէ գաւառապետին  
դուր չես գալիս՝ կամ թէ մի վատ  
բան եւ... ասում, կամ թէ գլխարկդ չը  
վերցնես նրա ներկայութեամբ՝ այն  
ժամանակ անմիջապէս կը պատժւես:

Ամեն մի գարադաւոյ (քաղաքապահ)  
ուրեաղնիկ և ստրաժնիկ (ոստիկանա-  
կան պահապան) ձեռք որ ցանկանար,  
կարող էր վերցնել և ոստիկանատուն  
տանել, հենց էնպէս, ոչ մի բանի  
համար, իսկ այնտեղ կարող էին ծե-  
ծելով սպանել և այնուհետև դրա հա-  
մար ոչ մի դատ, ոչ մի դատաստան:  
Նահանգապետը իւր հայեացքով կա-  
րող էր աքսորել քաղաքից, նահան-  
գից՝ ով որ իրեն դուր չէր գալիս:

Ուզած ժամանակ, գիշեր՝ թէ ցերեկ,

ինչ որ մատնիչ տեղեկութեան (դանօսի) հիման վրայ ոստիկանութիւնը կարող էր խուզարկութիւն կատարել և բանտարկել: Մարդ կարող էր ամբողջ տարի բանտում նստել և վերջն էլ բանից դուրս գար, թէ նա ոչ մի բանում էլ մեղաւոր չէ:

Եւ ոչ ոք սրա համար պատասխանատու չէր: Մի՞թէ կարելի է ապրել և հանգիստ աշխատել, երբ մարդ չըզիտէ՝ թէ վաղը նրանք է լինելու, տանը թէ՛ բանտում...

Ո՛չ: Բարեկարգ տէրութիւնների մէջ ամեն մարդ, եթէ որևէ շանցանք չի գործել, հանգիստ ապրում է և հաւատացած է, որ իզուր տեղ ոչ ոք չի կարող իրեն նեղացնել: Որքան էլ որ մեծ լինի իշխանութիւնը, այնուամենայնիւ չի կարող գորով ներս մտնել մէկի բնակարանը ոչ ոք չի համարձակւիլ մէկին իզուր տեղը, ապօրինի կերպով ծեծել և բռնել, կարգին տէրութեան մէջ մարդ կարող է գտնել դատաստան իրեն նեղացնողի դէմ—ով

էլ որ կուզի դա լինի, — թէկուզ նա-  
հանգապետը կամ թէ ինքը միևիստորը:  
Խղճի ազատութիւնը: — Ամեն մարդ  
կարող է հաւատալ և աղօթել, ինչ-  
պէս ուղում է և ինչպէս թելադրում  
են իր խելովն ու հաւատը և ոչ ոք  
չպիտի այս բանում խառնուի: Սա ոչ  
միայն նրա համար է, որ դրանով մար-  
դիկ կպատժուին կամ կճնշուին, այլ  
որովհետև բոնութեամբ ստիպել հա-  
ւատալ ու աղօթել անկարելի է: Այն  
ինչ մեղանում, դրա համար շատերն  
են տանջւել, շատերն են իրաւունքից  
զրկւել, աքսոր քշւել, բանա դրւել  
նրա համար, որ նրանք հաւատացել և  
աղօթել են իրենց ուզած ձևով և ոչ  
այնպէս, ինչպէս հրամայում էր կառա-  
վարութիւնը և հողեորականութիւնը:

Իսկապէս շատերն են լսել դուխօրօր-  
ների\*) և մալականների մասին, թէ

---

\*) Դուխօրօրներ նշանակում է «Հո-  
գու մարտիկներ»: Սոքա հետևորդներն  
են ուսս ժողովրդի մէջ 18-րդ դարի  
սկզբին տարածւած մի աղանդի, որը

ինչպէս էր նրանց հալածում մեր կա-  
ռավարութիւնը—մի քանի հազար դու-  
խօրօրներ, իրենց հայրենի գիւղերից  
քշեցին Կովկասի վայրենի տեղերը:  
Նրանց համար դժւար էր այնտեղ

կրում է Տիւրեքիստանի վարդապետու-  
թեան ազդեցութիւնը և որը վերջնա-  
կանապէս ձևակերպեց Կօլեանիկովը՝  
Սարկովի նահանգում: Այստեղից էլ  
սկսեց համեմատաբար աւելի արագ ու  
լայն հոսանքով մուտք գործել և տա-  
րածել ուրիշ նահանգներում: Սոքա  
աքսորեցին և հալածեցին նրա հա-  
մար, որ իրենց դաւանութեան մէջ, ի-  
միջի այլոյ և կային սոցիալիստական-  
կօմունական հետքեր ու պծեր:

Այսպէս, նրանք չէին ընդունում ե-  
կեղեցու նւիրապետութիւնը, Քրիստո-  
սի աստուածութիւնը, սուրբերի պատ-  
կերների պաշտամունքը, հաւատի բո-  
լոր ծիսական մասերը, երգումը:

Հերքում էին և չէին ընդունում  
պատկի խորհուրդը, պատի գաղափարը  
(այս վերջինս համարում էին չար գոր-  
ծերից հետո մնալը), և ընդունում  
էին միաստուածութիւն և հոգեփոխու-  
թեան գաղափարը, որ Աստուած ապ-

ապրել. շատ վշտեր կրեցին նրանք,  
շատ աշխատանք և ոյժ գործադրեցին  
անտառները կտրելու, հողերը մշակե-  
լու, հօտերը պահելու, որպէսզի նոր  
տեղերում ապրելու յարմարութիւն  
ստեղծէին: Բայց և այնպէս նրանք մի  
կերպ կարգի ընկան, ապրեցին, որով-

րում է մարդու հոգու մէջ և լուսաւո-  
րում նրան, սկզբնական մեղք գոյու-  
թիւն չունի, մահից յետոյ մարդու  
հոգին փոխանցւում է ուրիշ մարմին-  
ների մէջ:

Վճռականապէս ժխտում էին պետա-  
կան ծառայութիւնը, զինւորութիւնը և  
դրականապէս ընդունում էին բոլոր  
մարդկանց հաւասարութիւնը, համայն-  
քի կառավարութիւնն՝ աւագների խոր-  
հրդով:

Նրանք ձգտում էին իրագործել սո-  
ցիալական հաւասարութիւնը կեանքի  
մէջ և հետևաբար նրանք վստասակար  
էին միահեծան բռնապետութեան հա-  
մար:

Նրանց մեծ մասը գաղթեց և տեղա-  
ւորւեց Կանադայում—Ամերիկայում:

C. O. M.

հետև ժողովուրդն ազնիւ էր, աշխա-  
տասէր և համերաշխ ասլրող: Մի խօս-  
քով, կառավարութիւնը նրանց այդտեղ  
էլ հանգիստ չթողեց նորից քշեց հաս-  
տատուած տեղներից՝ մի մասը դէպի  
Սիրիւր, միւսը՝ Կովկասի ծայրերը, բոլո-  
րովին խուչ, անմշակ և հակառողջա-  
կան վայրեր: Բայց այնտեղ գտնուեցին  
մարդիկ, որոնք օգնեցին նրանց—դրամ  
հաւաքեցին, նաւեր վարձեցին և ծովի  
վրայով փոխադրեցին Ամերիկա: Մաս-  
նաւորապէս նրանց օգնեց Լև Նիկո-  
լաւիչ Տօլստօյը, այն անձնաւորու-  
թիւնը, որին հոգևորականութիւնը  
վանդել էր եկեղեցուց նրա համար, որ  
իրենց մասին ճշմարտութիւնն էր  
գրում: Իււխօբօրներին ամերիկացի-  
ները սիրով ընդունեցին, նրանց հող  
տւին, օգնեցին բնակութիւն հաստա-  
տելու համար և այսպիսով դուխօբօր-  
ներն սկսեցին նորից բարւօք կեանք  
վարել: Այդպէս էր վարւում հաւատի  
համար մեր կառավարութիւնը՝ ազնիւ  
մարդկանց հետ. իսկ ուրիշ տէրութիւն-

Ներում նրանց ընդունեցին և նոյն իսկ  
օգնեցին, որովհետև այնտեղ գնահա-  
տում են աղնիւ և աշխատասէր մարդ-  
կանց և յարգում են խրդճի ազա-  
տութիւնը:

Ինչպէս դուխօրօրներին, այնպէս էլ  
միւս գանազան ազանդներին, պետու-  
թիւնը հալածում էր, չէր թուլատրում  
նրանց ազատ հաւարել աղօթելու հա-  
մար. ոստիկանութեան հալածանքը  
պատուհաս էր նրանց համար: Ոչ մի  
տեղ այնպիսի այլանդակ կարգեր չեն  
եղել, ինչպէս մեզանում: Բայց առանձ-  
նապէս հալածել են հրէաները: Նրանց  
թուլատրած էր ապրել միմիայն որոշ  
նահանգներում. նրանց չէր թուլատրու-  
ում գիւղատնտեսական աշխատանք-  
ներով պարապել. արգելւած էր հողեր  
գնելը. ծառայութեան չէին ընդու-  
նում, չէին թողնում ուսում առնել:  
Եւստ վաղուց է՝ ինչ ուրիշ պետութիւն-  
ներում այդ նման բաներ չկան: Այն-  
տեղ բոլոր ժողովուրդները ազրում են  
համահաւասար իրաւունքներով:

Խօսքի ազատութիւնը. — նշանակում է,  
որ իւրաքանչիւրը կարող է ասել ինչ  
որ ուզում է, ինչ որ իրան հարկաւոր  
է ասելու և որտեղ որ ուզում է: Իսկ  
եթէ նա վիրաւորական որևէ բան ասեց  
ուրիշին, սա էլ կարող է զանգատել  
դատարանին: Ամեն ոք կարող է  
սովորեցնել ում որ հարկաւոր է և ինչ  
որ պէտք է — լաւ սովորեցնեն, լաւ կլինի  
վատ սովորեցնեն, վատ կլինի:

Իսկ մեզանում ինչ էր տիրում. բո-  
որի լեզուն էլ կաշկանդւած էր: Մարդ  
եթէ խօսում էլ էր, միւս կողմից  
զգուշանում էր, որ եթէ իր խօսակ-  
ցութիւնը մի ինչ որ նաչալնիկի դուր  
չգար՝ այն ժամանակ պատասխանա-  
տըւութեան հարց էր ընկնելու: Իսկ շատ  
բաների մասին խօսելը բոլորովին ան-  
կարելի էր, մասնաւորապէս այն  
բաների, ինչ որ անում էին չի-  
նովնիկները և կառավարութիւնը: Փոր-  
ձեր էին լինում ժողովրդին հաւաքե-  
լու և պատմելու, թէ ինչքան աղէտ  
էր պատճառում մեր կառավարութիւնը:



ձեռնարկելով պատերազմ եապոնացի-  
ների հետ, թէ ինչո՞ւ համար ծագեց  
այս արիւնահեղ պատերազմը, թէ է  
մեղաւոր, որ մեզանում ոչ մի բան  
պատրաստած չէր այնպէս՝ ինչպէս որ  
պահանջում էր, իսկ դրամը ջրի նման  
առատօրէն լցնում էին իրենց գրպան-  
ները զանազան գեներալներ և նոյն  
իսկ չինովսիկներ: Կամ թէ, նոյնպէս  
մի՞թէ կարելի էր ժողովրդի մէջ ճշմա-  
րիտ խօսել, գերմանացիների հետ մեր  
կուի մասին, այն մասին, թէ մեղա-  
նում ուղմամթերք չկայ, դէնք չկայ և  
ամեն տեղ և նոյն իսկ թագաւորի  
շուրջը՝ լրտեսներ և մատնիչներ կան:  
Եթէ սրանց մասին բացարձակապէս  
ասէր ժողովրդին՝ այն ժամանակ ա-  
տողին իսկոյն և եթ կրօնէին և բանտ  
կղնէին:

Միւս պետութիւններում, որտեղ  
խօսքի ազատութիւնն ընդունւած է,  
այդպէս չէ: Այնտեղ վստահութեամբ  
և բացարձակ կարելի է խօսել և քրն-  
նադատել պետական կարգերը՝ և ոչ թէ

շշուկով, վախենալով, որպէսզի մէկը  
չսի: Իրա համար այնտեղ բոլոր քա-  
ղաքացիները տեղեակ են՝ թէ ինչ է  
անձամբ և ինչպէս է ընթանում պետու-  
թիւնը:

Մեզանում ոչ միայն խօսելը, այլ և  
ժողովրդի համար կարգալը թոյլատրու-  
ած չէր: Ինչպէս գիտէք, պատահում  
էր գիւղերում և ֆարրիկաներում ժո-  
ղովրդական ընթերցանութիւն: Բայց  
իշխանութիւնը թոյլ էր տալիս կար-  
գալու միայն այնպիսի դրքեր, որոնց  
մէջ իրեն պովում էին, կամ թէ որոնք  
քիչ կարևորութիւն ունէին: Բոլոր  
կրթած մարդկանց թնդանօթների  
հարւածներով չէին թողնում դալու  
ժողովրդի մօտ. իսկ եթէ մէկը փոր-  
ձում էր մօտենալ գիւղացիներին կամ  
աշխատաւորներին, փորձում էր ժո-  
ղովրդին բացատրել ճշմարտութիւնը,  
այդպիսի մարդուն էլ, հէնց այդ ժա-  
մին նկատում և բռնում էին: Քննա-  
կան մի հատկացք ձգելով միթէ այնպէս  
չի երևում, որ մեր կառավարութիւնը

վախենում էր խօսքի ազատութիւնից,  
չէր «իրում կրթւած մարդկանց, ժո-  
ղովրդին հասկացնել ցանկացողներին  
թէ ինչից է, որ ինքը (ժողովուրդը)  
վատ է ապրում: Եւ միթէ՞ դա իսկա-  
պէս այդպէս չէր: Միանգամ ընդմիջա-  
դրացին մեր կառավարողները, թէ որ-  
տեղից է դալիս նրանց գլխին ամպրո-  
պային փոթորիկը:

Մամուլի ազատութիւնը—այս նշանա-  
կում է, որ ամեն մէկը կարող է տպել՝  
ինչ որ ցանկանում է, ինչ գրքեր որ  
ուզում է ծախել և բաժանել, ում որ  
ուզում է, իսկ եթէ այդ գրքերում  
գրւած կլինի վիրաւորական բարի ան-  
ւան համար և ուրիշի պատւի դէմ,  
այն ժամանակ յանցաւորին միշտ կա-  
րելի է դատի կանչել:

Այնտեղ, որտեղ մամուլի ազատու-  
թիւն կայ, գրքերը և լրագիրներն ար-  
ժան են, քան մեղանում և հետաքրքիր,  
որովհետև նրանք գրում են բոլորը  
այնպէս՝ ինչպէս կայ, ինչի մասին, որ  
պրողները մտածում են կամ գիտեն:

Իսկ մեզանում առանց իշխանութեան  
թոյլաութեան շատ լաւ բաների մա-  
սին գրելն արգելւած էր: Բաղմաթիւ  
թերթեր և գրքեր, նախ քան նրանց  
տպագրելն ու լոյս տեսնելն՝ իշխանու-  
թեան ձեռքի տակով էին անցնում—  
գրաքննութեան (цензура) էին ենթար-  
կում: Իշխանութիւնը մասնաւորապէս  
խիստ հետևում էր, որպէսզի ժողովրդ-  
ին մատչելի գրքերը և թերթերը թիչ  
լինեն:

Ուրիշ պետութիւններում կան գիւ-  
ղացիական ու աշխատաւորական լրա-  
գիրքներ և օրաթերթեր, որոնց մէջ ա-  
մենից շատ գրում են գիւղացիական  
և աշխատաւորական կարիքների մա-  
սին, նրա մասին, ինչ որ օգտակար և  
հարկաւոր է ժողովրդին:

Մեզանում այդպիսի թերթեր երբէք  
չթոյլատրեցին, կամ եթէ թոյլատրե-  
ցին էլ, դա պետական ուղղութեամբ  
«Գիւղական Համբաւարներ»-ն էր,  
որի մէջ գիւղացիութեան համար ոչինչ  
լաւ չէր գտնի, որի մէջ ամենից շատ

զրու՛մ էին նրա համար, որ ժողո-  
վուրդը լսէր և յարդէր իշխանութեանը  
և հաւատար նրա բարի հողատարու-  
թեանը: Իսկ այժմ, բոլորովին յայանի  
է, թէ ինչպիսի հողակը էին դրանք,  
նշանակու՛մ է, որ այդպիսի թերթը  
բանել էր ոչ թէ ժողովրդի, այլ իշխա-  
նութեան կողմը:

Ազատքիւն՝ միութիւնների, գործա-  
դույների եւ ժողովների:— Քրեթէ ամեն  
մի գործ կատարելն աւելի հեշտ է  
ընդհանուրի համաձայնութեամբ. այն՝  
ինչ որ մի մարդ ոչ մի կերպ չի կա-  
րող անել, այդ ընդհանուր համաձայ-  
նութեամբ, մի քանի մարդիկ միացած  
ամենայն հեշտութեամբ գլուխ կրերեն:

Երբ մարդիկ միանում են իրար  
օգնելու, իրենց կեանքը բարեկեցիկ  
դարձնելու և գործերը բարելաւելու՝  
հենց այդ էլ կոչւում է միութիւն: Եւ-  
րոպացում ամեն տեսակի միութիւն-  
ները շատ շատ են:

Աշխատուորները միութիւններ են  
կազմում, որպէսզի պայքար մղեն գոր-

ծարանատէրերի դէմ իրենց դրութիւնը  
բարւոքելու համար. նրանք ունեն ի-  
րենց գանձարանները (касса), այսինքն  
իրենց աշխատանքից մի քիչ վճարում  
են գանձարանին, որպէսզի իրար օգ-  
նեն դժբախտութեան դէպքում. կամ  
եթէ նրանցից որ և է մէկին գործա-  
տէրն աշխատանքից հեռացնում է՝ օգ-  
նում են նրան նոր աշխատանք գլու-  
նելու:

Գործատէրերի հետ մենակ կուելը  
դժւար է:

Եթէ քեզ գործից հեռացնում են՝  
որպէսզի սովից չը մեռնես՝ ստիպւած  
ես կաշիելու հենց առաջին պատահած  
աշխատանքին, իսկ երբ կայ միու-  
թիւն՝ այն ժամանակ միութեան օգ-  
նութիւնով կարելի է մի առ ժամա-  
նակ սպասել և գտնել աւելի յարմար  
և ձեռնտու աշխատանք:

Երբ գործատէրն իմանայ, որ աշխա-  
տաւորները միութիւն ունեն նա այն-  
քան էլ հեշտութեամբ չի կարող ճշն-  
շել նրանց: Այնտեղ, արտասահմանում,

գիւղացիներն էլ են միութիւններ կազմում զանազան նպատակների համար, ինչպէս օրինակ՝ վաշխառուների դէմ իրար պաշտպանելու, հացը միասին համաձայնութեամբ ծախելու համար, որպէսզի կեղեքիչներն այնքան էլ հեշտութեամբ չկարողանան արժէքն իջեցնել և այլն: Մեղանում հին կառավարութեան ժամանակ, բոլոր այսպիսի միութիւնները խստիւ արգելւած էին, արգելւած էր նոյնպէս և ամեն մի ժողով:

Բայրի համար հաւասար հրապարակային դատարան. — Սա մարդկա ին կեանքի ճշմարտութեան և արդարութեան ամենասանճրաժեշտ պայմանն է պետութեան մէջ: Մեղանում դատարանն էլ միշտ անաչառ չի եղել, բոլորին միանման չէին դատում, և ոմանց էլ դատում էին բոլորովին անարդարացի կերպով, որովհետև հենց այս դատաւորների ամենից մեծ մասը նոյնպէս չինոքնիկներ էին և մի քանիսին դատում էին ոչ օրէնքով, այլ ինչպէս

հրամայում էր բարձրագոյն իշխանութիւնը: Վարդուցեայ առած է—«Ուժեղների հետ մի կուլիլ, հարուստների հետ մի դատուիլ»: Յեզճ մարդն ամեն ժամանակ հեշտութեամբ չէր դանիլ արգարութիւն մեր դատարաններում: Իսկ չինովնիկների և իշխանաւորների դէմ ընդհանրապէս դատ չի եղել, որովհետեւ չինովնիկին դատի տալու համար կարելի էր միմիայն իր իշխանաւորի թոյլտուութեամբ, ախր իշխանութիւնն էլ չինովնիկներ են, միայն թէ աւելի բարձր չինովնիկներ, հասկանալի է, որ նրանք իրար կաշաշտպանեն:

Ետերին է յայտնի դանազան չինովնիկների արարքները, խի նրանցից քանիսին դատեցին: Յայտնի է թէ ինչպէս մի քանի նշանաւոր գեներալներ և չինովնիկներ կեղեքեցին ժողովրդին, վատնեցին պետական դրամները—և նրանց պաշտպանեց բարձրագոյն իշխանութիւնը: Ընդա է օրինակ, որ լրտես Մեասօնդօսին մահւան պատիժ տւին իր մատնութիւնների հա-



մար, բայց ախար չէ որ Մեասօղոսի  
փոքրերից էր, նրան պատճնցին, որ  
մեծ գողերն ազատեն: Իսկ ահա Սու-  
թամլինովին՝ մինիսարին՝ մեր դօրքին  
առանց ռազմամթերք թողնողին մեր  
կառավարութիւնը դատի չէր տա-  
լիս, շարունակ ձգձգում էր: Եւ  
այդպիսով էլ նրա անամօտ ռաբերա-  
յութիւնը ծածկւած կմնար, եթէ վերջ  
ի վերջոյ ինքը դատի տակ չընկնէր:

Այժմ մենք օրէնքների առաջ բո-  
ւորս էլ հաւասար ենք, իսկ եթէ առաջ  
աղքատը, կամ թէ ցածր ծաղումով  
մարդը փորձէր դատարանին դիմել  
պաշտպանւելու՝ չիսովսիկի վիրաւո-  
րանքի դէմ, այդ դէպքում նրան եր-  
բէք չէր յաջողւի դա: Այդ դեռ բոլորը  
չէ, առաջւայ կարգերի ժամանակ,  
մենք նոյն իսկ յաճախ իմանալ չէինք  
կարողանում, թէ մեղանում ինչպէս են  
դատում, որովհետեւ շատ գործերում  
դատարանում ոչ ոքի ներս չէին թող-  
նում և մասնաւորապէս այն գործերի  
համար, երբ դատը լինում էր չիսով-

նիկների կամ թէ պետութեան դէմ  
կուռող անձերի համար: Այժմ հասել է  
ժամը, որպէսզի մեզանում դատը լինի  
հաւասար բոլորի համար և, որ զխա-  
ւորն է, որպէսզի դատենն ոչ ծածուկ,  
և առանց որևէ մէկից թաղցնելու թէ  
ինչ են անում պատարանում:

Պետական կառավարութիւն բոլոր ժո-  
ղովուրդի բնօրոճ մարդկանց ձեռքով. —  
Այս պահանջն ամենակարեւորն է: Ամեն  
մի տնտեսութիւն ամենից լաւ կարող  
է կառավարել հենց ինքը տէրը, որով-  
հետև նա բոլորից լաւ գիտէ՝ թէ նրան  
ինչ է հարկաւոր: Իսկ եթէ նրա տըն-  
տեսութիւնը շատ մեծ է և բոլորին  
ինքը նայել չի կարող, այն ժամանակ  
նա յանձնում է դա այնպիսի մարդ-  
կանց կառավարելու, որոնց ինքը հա-  
ւատ է ընծայում, և նրանցից հաշիւ է  
պահանջում, եթէ նրանք գործերը վատ  
են տանում՝ նա հեռացնում է և նրանց  
տեղ վերցնում ուրիշներին: Պետու-  
թիւնը — դա ժողովրդի տնտեսութիւնն  
է: Ախր աշխատաւոր ժողովուրդը փող

է ծախսում, որպէսզի պահի այն բո-  
լորը, ինչ որ հարկաւոր է կառավա-  
րութեանը—զօրք, դատարան, դպրոց-  
ներ, ճանապարհներ, արդիւնաբերու-  
թիւն, վաճառականութիւն: Առանց աշ-  
խատաւոր ձեռքերի, որոնք տալիս են  
իրենց աշխատանքը, իրենց ոյժը, իրենց  
միտքը—եթէ չաշխատէին ֆարրիկանե-  
րում մեքենաների վրայ, եթէ բերքը  
դաշտերից չհաւաքէին, եթէ ճանա-  
պարհները չշինէին—չէր լինիլ և պե-  
տութիւնը: Իսկ ո՞վ էր այդ բոլոր  
տնտեսութիւնը կառավարում մեղա-  
սում նրա տէրը՝ թէ իր գործակատար-  
ները որոնց ինքն էր առաջարկում:

Ո՛չ: Կառավարում էին օտար մար-  
դիկ, շինովսիկների մի ամբողջ վոհ-  
մակ: Նրանք ամեն ինչ յափշտակում  
էին, ոչ ոքի ճանաչել չէին ուզում, ոչ  
ոքի ոչ մի բանում հաշիւ չէին տալիս,  
**այլ անում էին այնպէս՝ ինչպէս որ ու-**  
**զում էին:** Այդ դեռ քիչ է. հրամայում  
էին տէր—ժողովրդին ապրելու և ըն-  
թանալու այնպէս, ինչպէս իրենց հա-

մար էր յարմար: Աւ այդ ինքնակոչ  
տէրերն այնքան ամբարտաւան էին,  
որ իսկական տիրոջը—ժողովրդին—  
բոլորովին չէին ընդունում և նոյնիսկ  
մինչև այնտեղ հասցրին, որ նա քաղցից  
մեռնում էր, խլել էին նրանից ամեն  
նավերջին կարողութիւնը և վատնում  
էին այնպիսի բաների համար, որ ժո-  
ղովրդին երբէք պէտք չէին: Հարիւրա-  
ւոր միլիոն աշխատաւորների գրամը  
դնում էր բաւարարելու դօրքի և չի-  
նոմսիկների սոճիկներին: Չինոմսիկնե-  
րից իւրաքանչիւրն ստանում էր այն-  
պիսի սոճիկ, որով հարիւր մարդ կա-  
րող էր ապրել. իսկ եթէ որեէ չինով-  
նիկ, նոյնիսկ իւրայինների համար  
դառնում էր անպէտք, այն ժամանակ  
խօսմ նրան չէին վճարում և չէին դա-  
տում, այլ փոխադրում էին նրան Պե-  
տական Պորհրդում կամ Սենատում ա-  
մենապատուաւոր տեղը, որտեղ մտնում  
էին պետական ամենակարեւոր հար-  
ցերը և այդպիսի չինոմսիկի սոճիկն  
առաջւանից էլ աւելի էր բարձրանում,

իսկ ինչ վերաբերում է գործին, նրա-  
բանից քիչ էին հարցնում թէ ինչ է  
ունում: Ըստ առածի՝ «գողը գողին չի  
մտանիլ և իւրայինը՝ իր եղբորը, և  
քեզ և դու ինձ»: Այժմ դա հաւատարի  
չէ, բայց ճշմարիտն այդ է: Օրինակ՝  
Սենատ էին փոխադրել բոլոր այն  
հասանազատեաներին, որոնք գործին  
անպէտք էին ճանաչել, իսկ այնտեղ  
նրանց ոչինչ չէին տւել անելու, այլ  
միմիայն ոտճիկ էին վճարել:

Աշխարհում ոչ մի տեղ Ֆարրիկա-  
տերերն այնքան աշխատանք չեն ստա-  
ցել, ինչքան մեղանում: Արտասահմա-  
նում նրանք մի բուրլու մէջ ամենա-  
շատը 10 կողէկ էին վաստակում, իսկ  
մեղանում՝ 30, նոյնիսկ 50 կողէկ: Ին-  
չու է այդպէս, որովհետեւ մեղանում  
ապրանքը, նիւթը վառն է և աշխա-  
տելն էլ արժան է, աշխատաւոր ար-  
ժան էր, իսկ ապրանքը ծախում էին  
թանկ, քան արտասահմանում: Եւ  
թանկ և փտած: Բոլորն էլ ստիպւած  
էին լինում գնելու արտասահմանեան

ապրանքներ (օրինակ, մեղանուժ գիւղացիներն աւստրիական մանգաղներ, գերանդիներ են գնում), այնտեղի բոլոր ապրանքները, աւելի լաւ և դիմացկուն են՝ քան մեղանուժ:

Կարծուժ էր, որ միայն յիմարները կսկսէին գնել մեր Ֆարրիկատէրերի վատ ապրանքը թանգ գնով՝ երբ աւելի լաւ և արժան ապրանք կայ: Հենց այդտեղ էլ մեր կառավարութիւնը, որպէս բարիք այնպէս էր սարքել, որ ժողովուրդը ազամայից ստիպւած լինէր գրել մերոնցից՝ անպէտք ապրանքները և թանգ վճարել: Ընդհանրապէս արտասահմանից այլ ապրանքների ներմուծումը արգելւած էր, իսկ միւսների վրայ էլ դրել էին մաքսեր, հարկեր, այն էլ այնքան մեծ, որ ապրանքըն սկսեց թանգանալ, ինչպէս որ մեղանուժ են անում: Արտասահմանում գերանդիին արժէ 20 կոպէկ, իսկ որպէսզի մեզ մօտ բերւի, պէտք է 50 կոպէկ հարկ վճարել, իսկ որպէսզի ապրանքըն առանց մաքսի չ'ներմուծ-

ւի, կառավարութիւնը պահուամ էր պահակներ և ամբողջ հազարաւոր շինուկներ, որոնք հսկում էին սահմանագլխին և վատնում էին դրա համար միլիոնաւոր դրամներ:

Իսկ ժողովուրդը, որը պարտաւորւած է գնել ամեն մի դիրիլ թանգ գնով, իզուր տեղը կրկնապատիկ վրձարում էր միլիոնաւոր դրամներ, չէ՞ որ ժողովրդի իւրաքանչիւր կոպէկը թանգ արժէ:

Մեր կառավարութիւնն աւելի շատացրեց երկաթի գործարանների թիւը, ուղղակի նրանց իզուր տեղը փող էր բաժանում: Երկաթէ իրերի վրայ էլ հարկ էր դրւած, եթէ որ նրանց արտասահմանից էին բերում, այդ հարկը դարձեալ նրա համար էր, որպէսզի մեր ուս գործարանատէրերը կարողանային իրենց ապրանքը թանգ ծախել: Այսպիսով դուրս եկաւ, որ մեր երկաթից արտասահմանում երկու անգամ աւելի արժան իրեր շինեցին՝ քան մեզանում: Ժողովուրդը միջոց չունէր

գնել այդ երկաթէ իրերը թանգ գնով  
և այն էր վատը և ահա բանից դուրս  
եկաւ, որ գործարաններում աշխատանք  
չկայ. նոյն ժամանակ արքունի գան-  
ձարանն սկսեց իրանից պատւէրներ  
տալ, պատւէրներ, որոնք միլլիոննե-  
րով էին: Եւ դեռ աւելին, պատւէրներ  
էին տալիս այնպիսի գործարանատէ-  
րերին, որոնց գործարանները դեռ  
չինւած էլ չէին, բոլորովին գոյութիւն  
չունէին:

Այդպիսի գործարանատէրը վերց-  
նում էր կանխավճար և դրանով իր  
գործարանը շինում, և յետոյ արդէն  
այդ գործարանում էլ պատւէրները  
կատարում: Եւ այդպիսի ձևերով ի  
հարկէ, պատւէրները շատ թանգ էին  
նստում և բոլոր օգուտը գնում էր  
գործարանատիրոջը: Այսպէս, տասը  
տարի սրանից առաջ, կամ էլ աւելի,  
արքունական գանձարանը Խարկովեան  
շոգեմեքենային գործարանին պատւէր  
էր տւել 300 շոգեմեքենայ և 12 միլ-  
լիոն փութ երկաթագծեր (բельсь) Վո-



լինցնեան գործարանին, իսկ այդ  
գործարաններն այդ ժամանակ դեռ  
չկային: Երկաթագծերը եթէ ուրիշ  
տեղից գնէին, կարժենար փութը 75 կ.,  
իսկ գործարանները մեր արքունական  
գանձարանի համար շինեցին փութը  
1 ր. 23 կոպ.: Եւ այսպիսով մի տա-  
րոււմ երկաթագծերի համար մեր գոր-  
ծարանները 12 միլիոն բուրլի աւե-  
լորդ աշխատանք վերցրին:

Ժողովուրդը մեզանում օրինակ՝ շա-  
քարը ընդունում է անուշեղէնի, փար-  
թամութեան փոխարէն և նոյն իսկ չի  
կարողանում շատ թէյ խմել շաքարով,  
երբ շաքարի համար հարկաւոր է վճա-  
րել Ֆունտին 16—17 կ.—պատերազմի  
ժամանակ դա շատ թանդ էր, որովհե-  
տե հենց այդ շաքարի Ֆունտի իսկա-  
կան գինը 3 կոպէկ էր. և մեր գոր-  
ծարանատէրերն էլ իրենց շաքարն  
արտասահմանում ծախում էին 4 կո-  
պէկով, իսկ այնտեղ այդ շաքարով  
խոզեր էին կերակրում, որովհետեւ շա-  
քարով դրանք լաւ են չաղանում:

Այնքան բարձր էր շաքարի մաքսը, որ արտասահմանից էլ շաքար չէին ներմուծում: Ահա սրանից երևում է, որ արտասահմանում մեր շաքարը խոզերն էին ուտում, իսկ մենք մեր երեխաներին ափսոսում էինք կերակրել դրանով:

Մեզանում երբ ճանապարհները շինւում էին, նոյնպէս շատ յափշտակութիւններ եղան Այնտեղից օգտւեցին և կապալաւուները (փօղրաթ շիները), և գործարանատէրերը, և մասնաւորապէս, չինոյնիկները, որոնք հսկում էին կառուցման գործին: Սիրիւրիայում ճանապարհը երբ շինում էին, պատերազմ ծագեց չինացիների հետ, և ահա, թէ ինչ պատահեց. — չինոյնիկները վերցնում վառում էին կայարանը, երկաթադժերն էլ քանդում և յետոյ իշխանութեանը գրում, որ իբր թէ չինացիները յարձակւել, ճանապարհները փչացրել են, իբր թէ միայն իրենք են կենդանի մնացել:

Սէ, բացի այն, բաց են թողնում նը-

րանց երեքսպատիկ դրամ, նորից շինե-  
լու համար, յետոյ տալիս են նաև շը-  
քանշան հերոսութեան համար: Այդ  
հետևանքով Սիրիւրիայի այդ ճանա-  
պարհը երկու անգամ աւելի թանգ  
նստեց. շատ միլիոններ տակով արին:

Եւ որտեղ որ նրանք շինովնիկներն  
աչք են դրել, այդպէս է եղել ժողո-  
վըրդական փողերը ոչ ոքի համար ափ-  
սոսելի չի եղել, իսկ ինքը, տէր—ժո-  
ղովուրդը, եթէ ամսոսար էլ մի՞թէ այն  
ժամանակ նա կարող էր իմանալ՝ թէ  
ի՞նչ է կատարոււմ իր շուրջը:

Չինովնիկները, ի հարկէ, իզուր  
տեղը չէր, որ գործարանատէրերի և  
վաճառականների հետ այնպիսի շահա-  
ւետ պայմաններ էին կապել: Նրանք  
նոյնպէս հարստացան մեծ գումարնե-  
րով: Հենց այդ շինովնիկները իրանք  
էին գրում և օրէնքները, և դանազան  
հրամաններ, որոնք ժողովուրդը պար-  
տաւոր էր կատարել:

Նրանք լաւ ի՞նչ կարող էին գրել,  
եթէ ոչ այն՝ ինչ որ իրենց օգուտն է

և ժողովրդին մնաս: Նրանք կը գրէին  
իրենց հակառակ օրէնքներ: Եւ այս-  
պիսով նրանք նախատեսում էին այն-  
պիսի օրէնքներ, որոնք բոլոր ժողո-  
վրդի համար ծանր էին, իսկ իրենց  
ձեռնառու գիւղացիների համար ա-  
ռանձին դատարան շինեցին: Հընա-  
րեցին գաւառային իշխանաւորներ  
(Землеуходъ и наделъ): Ստեղծե-  
ցին մնայուն ուրիադնիկներ, ժան-  
դարմներ, գիւղական ստրաժնիկներ:  
Մի՞թէ այս բոլորը ժողովրդին հարկա-  
ւոր էր: Ինչպէս թշնամու վրայ՝ ամ-  
բողջ զօրք էր բաց թողնւած ժողովրդի  
վրայ: Եւ որպէսզի ժողովուրդը ոչինչ  
չը հասկանար, նրանք ամեն մի նե-  
ղութիւններով տանջում էին, որպէս-  
զի նա չը համարձակէր ծպտուն հա-  
նել:

Զեմատուն\*) ժողովրդի համար այն-

---

\*) Զեմատու, կարելի է թարգմանել  
«հողապետութիւն»: Սա ցար Ալէքսան-  
դրը II-ի դահակալութեան ժամանակ  
Սրիմի անյաջող պատերազմից յետոյ:

ուամենայնիւ շատ բան արեց յամե-  
նայն դէպս բժիշկներ կանչեց, հիւան-  
դանոցներ, դպրոցներ շինեց: Իշխա-

գաւառական և նահանգական ինքնա-  
վարութեան մի ձև է, որ հաստատուեց  
բարձրագոյն ուկադով 1864 թ. յուն-  
ւարի 1-ին՝ նախապէս երկար ու բա-  
րակ քննած լինելով Ռուսաստանի  
33 նահանգների համար: Չնայած այս  
հանգամանքին, այնու ամենայնիւ դեմ-  
սաւոյի կանոնադրութեան գործա-  
դրութիւնն սկսեց ամբողջ մի տա-  
րի յետոյ՝ 1865-ին: Այս կանոնադր-  
ութիւնն աւելի ժողովրդական բնոյթ  
ունէր, և զեմսկի մարմինները կազմը-  
ւում էին ընտրութեամբ: Չեմսկի  
վարչութեան իրաւասութիւնն էր գա-  
ւառական և նահանգական տնտեսա-  
կան և կուլտուրական ներքին բարե-  
կարգումն. ինչպէս օրինակ՝ ճանա-  
պարհներ անցկացնելը, դպրոցների,  
հիւանդանոցների կառուցումն, զեմ-  
սկի բնակարանների և կալւածքների  
ապահովագրութիւնը, աղգարնակո-  
թեան մէջ տարածւող վարակիչ հի-  
ւանդութիւնների և վնասակար մի-  
ջատների դէմ միջոցներ ձեռք առնե-  
լը, երկրագործութեան զանազան ձե-

նութիւնը դրա համար էլ միշտ ճշն-  
շում էր զեմատւօին և ուղում էր նոյն  
խակ ընդորովին վերջացնել, որպէսզի  
նրա տեղ դնէր իր շինովնիկներին:  
Այժմ այդ բոլորի վերջն եկել է: Հա-  
սել է ժամը, որ ինքը տէրը կառա-  
վարի իր տնտեսութիւնը: Եւրոպա-  
յում բոլոր տնտեսութիւններում ժո-  
ղովուրդը այդ շատ վաղուց հասկա-

---

ւերի և տեսակների բարելաւումն, և  
այլն և այլն:

Հետզհետէ ժողովրդի այս զեմատ-  
ւօյական իրաւունքները կրճատւեցին,  
և վերջապէս 1890-թւի յուլիսի 12-ին  
օրէնքի համաձայն զեմատւօի հաս-  
տատութիւնների կազմի կէսից աւե-  
լին պէտք է ընտրւէին ազնւականնե-  
րից, կալւածատէրերից և բարձրաս-  
տիճան անձերից, որոնց համար և սա-  
յազթական մի գրաւական էր. ընդ-  
հանրապէս զեմատւօն ազատամիտ ու  
ժողովրդական բան էր համարում,  
դրա համար էլ կառավարութիւնը միշտ  
ուղղակի թէ անուղղակի միջոցներով  
ճնշում և հալածում էր:

ցել և երկար ժամանակ է, ինչ նա ըս-  
կըսել է ինքը տիրել իր գործերին, մի-  
այն Տաճկաստանումն է, որ չինով-  
նիկներն են կառավարում բոլորը:  
Ինչպէ՞ս է կարող ժողովուրդն իր  
անտեսութիւն — պետութիւնը դեկավա-  
րել: Ահա թէ ինչպէս են այդ անում  
միւս պետութիւններում: Ժողովուրդը  
ընտրում է իր միջից վստահելի մար-  
դիկ, որոնց ինքը հաւատում է և դի-  
տէ, որ նրանք իր պաշտպանը կը  
հանդիսանան: Եւ ընդունում է ոչ թէ  
այնպէս՝ ինչպէս լինում էր, ասեմք  
դեմսուօի ընտրութիւնները կամ թէ  
օրինակ՝ տանուտէր (старшина) ընտրե-  
լը, որին գաւառական նաչախներ, որ  
հրամայում էր՝ նրան էլ ընտրում էին,  
այս ընտրութիւնների ժամանակ ոչ  
մի իշխանութիւն չի կարող լինել, և  
իւրաքանչիւրը իր ձայնը տալիս է  
գաղտնի թղթի վրայ, գրում է, ում  
որ ուզում է, և գրութիւնը փակում է,  
ծրարում և տալիս է այսպիսի հան-  
գամանքներում, որ ոչ ոք չի կարող

մանալ՝ թէ դու քո ձայնը նւմ տւիր։  
Եւ այդ նրա համար են անուամ, որ  
պէսզի հարուստները չկարողանան  
աղքատներին և իրենց աշխատաւոր-  
ներին ուժով, սպառնալիքով կամ թէ  
վախեցնելով ստիպեն իրենց ձայն  
տալու։

Այսպիսով կարող է պատահել ըն-  
տրբւի նոյն իսկ ամենաաղքատ մար-  
դը։ Ահա հէնց այդ ժողովրդի ընտրած  
մարդիկը հաւաքուում են միասին,  
մայրաքաղաքում ժողովրդական ժողով  
կազմում և ղեկավարում ժողովրդի  
տնտեսութիւնը, կարգադրում են ժո-  
ղովրդի փողերը, նշանակում է որտեղ  
և ինչի վրայ է հարկաւոր փող ծախ-  
սել. նրանք նոյպէս բոլոր ժողովրդի  
համար գրում են օրէնքներ և հետե-  
ւում, որպէսզի օրէնքները գործադր-  
ւին և որպէսզի ոչ ոքի վիրաւորանք  
չը հասնի։ Ժողովներին կարող է յա-  
ճախել ամեն ոք, որ ցանկանայ, լսել  
թէ այնտեղ ինչ են ասում և անում։  
Եւ այն բոլորը, ինչ որ այնտեղ տրբ-



ւում է՝ թերթերում տպւում է, որ  
 բոլոր ժողովուրդը, նոյնիսկ ամենա-  
 ջնջին բաներն էլ գիտենայ, թէ իւր  
 տէրութիւնն ինչպէս է ընդունում:  
 Իսկ եթէ ժողովուրդը լսում և տես-  
 նում է, թէ որ և է մի ընտրւած վատ  
 է խօսում և գործում, այն ժամանակ  
 նրան միւս անգամ էլ չեն ընդանում:  
 Եւ ընտրում են իւրաքանչիւր լիազօ-  
 րին 3 կամ 4 տարի ժամանակով:

Այն ժամանակ չի կարող լինել այն-  
 պէս՝ ինչպէս մինչ այժմ մեզանում  
 է եղել: Մի մինիստր օրէնքներ էր  
 գրում, մի ուրիշը նրա հակառակն էր  
 ընդունում, իսկ երրորդը էլի նորից  
 օրէնքներ էր գրում և այդպէս շարու-  
 նակ: Օրէնքները կը կաղմեն ժողո-  
 վրրդական ժողովում և նրա գործա-  
 դրութեան համար պատասխանատու  
 կը լինեն մինիստրները և ուրիշ պաշ-  
 տօնեաներ հէնց այդ ժողովրդական  
 ժողովի առջև: Բոլոր մինիստրներին  
 և պաշտօնեաներին ոտճիկ կը նշանա-  
 կի ժողովրդական ժողովում: Եւ եթէ

որևէ միևիատր կամ պաշատնեայ գործը լաւ չը դիտէ և չի հետևի օրէնքների գործադրութեան, այն ժամանակ ժողովրդական ժողովը իրաւունք ունի նրան դատի տալու:

Բայց կայ պետութիւն, որտեղ թագաւոր կամ կայսր չկայ, այլ միմիայն ժողովրդական ժողով և այդ ժողովըրդական ժողովի կողքին — պրեզիդենտ (նախագահ): Ինչպէս մեզանում, օրինակ՝ լինում էր տանուտէր, այդպէս էլ և այնտեղ այդ պրեզիդենտն՝ աւագըն է ամբողջ պետութեան: Միայն թէ դարձեալ առանց ժողովրդական ժողովի կամքի նա ինքնակամ ոչինչ սկսել չի կարող: Մեր պետութիւնը, այժմ կը կառավարւի ժողովրդի ընտրած մարդկանցով, նոյնպէս կարելի է ենթադրել, որ կը կառավարւի իւրաքանչիւր մի նահանգ, իւրաքանչիւր մի շրջան, իւրաքանչիւր գաւառ: Իւրաքանչիւր գաւառում կը լինի գաւառային ժողով, շրջաններում — շրջանային, նահանգներում — նահանգական

ազատ ժողովրդի ընտրած մարդկան-  
ցից: Եւ դարձեալ այդտեղ կարող է  
ընտրել ամեն մէկը, ով որ ապրում է  
գաւառում—հարուստ և աղքատ, ա-  
մեն մի կոչումի և արհեստի տէր մարդ,  
գիւղացի և այլ բնակիչներ:


Այդ ժողովները կը կարգադրեն  
տնտեսութիւնը, դրամ կը հաւաքեն  
ու կը գործադրեն: Եւ երբ մեզանում  
այդ բոլորը կը լինի, այն ժամանակ  
չարքաշ մարդը կը սկսի դիւրին ապ-  
րել, նոյնիսկ այնքան դիւրին, որ  
այն ժամանակ ժողովրդին հեշտ և  
ազատ կը լինի քննադատելու իր  
գործերը և կարիքները, հասնելու ար-  
դարութեան և պաշտպանւելու հա-  
րուստ մարդկանց հարստահարումնե-  
րից:

Սյն ժամանակ նա կը պահանջի,  
որպէսզի իր ընտրածները քննեն ժո-  
ղովրդական ժողովներում գիւղացիա-  
կան բանւորական գործերը, թէ  
գիւղացիները ինչպէս աւելի լաւ կար-  
գաւորեն իրենց կեանքը, որ ուժից

վեր հաշխատեն և ունենան այնքան,  
որքան որ հարկաւոր է բարեկեցու-  
թեան համար: Միայն ինքը ժողո-  
վուրդը կարող է իր օգտի համար ա-  
նել այդ բոլորը և ոչ թէ տիրողները,  
մեզանում մինչ այժմ, չինովնիկները,  
ժողովրդի առջև այդ անսպասախա-  
նատունները:



ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «ԱՇԽԱՏԱԻՈՐ»-Ի  
ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԳՐԲՈՅԿՆԵՐԸ



1. Ծ. Բրեշկո-Բրեշկովսկայա. — Ինչ-  
պէտք է անել Հիմնադ. ժող. 5 կ.
2. Ն. Ա. Րուբակին. — Հողի սեփա-  
կանութիւնը և համայնական սե-  
փականութիւնը. 10 կոպ.
3. Վ. Յորէնի. — Ինչ է սոցիալիզմը.  
գինն է 15 կոպ.
4. Ժ. Ժորէս — Սաղաղութեան դա-  
ղափաշը. գինն է 10 կոպ.
5. Մեր ծրագիրը — Հայ Յ. Դաշնակ-  
ցութեան ծրագրի պարզ բացա-  
տրութիւնը) — գինն է 20 կ.
6. Կարրելիկ. — Նոր լեռան քարոզը,  
Թարգ. Տ. Յ. — 10 կ.
7. Վիլհելմ Լիբկնեխտ. — Սարգերը և  
ճանճերը գինն է 10 կ.
8. Լիբին. — Ինչ է հինմադիր ժողովը  
Ռուս. Թարգ. օր. Լ. Յարութիւ-  
նեան, գինն է 10 կոպ.

9. Վ. Խորհնի. — Ե՛րբ և ի՛նչպէս պէտք է լինի սոցիալիստական յեղափոխութիւնը. գինն է 50 կ.:
10. Պ. Իսկուելիչ. — Աշխատաւորների միջազգային միութիւնը: (Ռուս. փոխադ. Ռուսոն. գինն է 20 կ.:
11. Վ. Խորհնի. — Սոցիալիզմ և բարոյականութիւն, գինն է 20 կ.:
12. Գ. Ն. Կրեմնիցկի. — Ի՞նչ է Ֆեդերատիւ հանրապետութիւնը, ռուս. ազատ թարգ. Իրադեկ, գ. 20 կ.:
13. Վ. Ռ. — Ի՞նչպիսի կարգեր են հարկաւոր ժողովրդին, ռուս. թարգմ. Կարմին, գինն է 30 կոպ.:

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Դիմել՝ Тифлисъ, редакция газеты „Ашхатаворъ“, Головинскій пр. № 7.